# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Սիսիանի Հաց ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | -- | -- | -- | " Պատրաստի օգտագործման բնական հյութ, տեղական արտադրության; Մասուրի նեկտար կամ մասուրի հյութ պարունակող ըմպելիք, որը պատրաստվում է մասուրի լուծամզվածքային հյութից, շաքարավազից և կիտրոնաթթվից: Մասուրի նեկտարի կամ հյութ պարունակող ըմպելիքի գույնը` լավ արտահայտված դարչնագույնից մինչև մուգ կարմրադարչնագույն: Արտաքին տեսքը` բնական չպարզեցված հեղուկ (թափանցիկությունը պարտադիր չէ, թույլատրվում է տարայի հատակին նստվածքի առկայություն` պայմանավորված բնական հումքի օգտագործմամբ): Մասուրի նեկտարում և հյութ պարունակող ըմպելիքում լուծվող չոր նյութերի զանգվածային մասը պետք է լինի ոչ պակաս 9 %–ից: Մասուրի նեկտարում և հյութ պարունակող ըմպելիքում էթիլ սպիրտի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | պարունակությունը՝ չպետք է գերազանցի 0,2 %-ը, իսկ օքսիմեթիլ ֆուրֆուրոլի զանգվածային մասը պետք է լինի ոչ ավելի 20 մգր/դմ3-ից: Մասուրի նեկտարում չի թույլատրվում հանքային, բուսական կամ կողմնակի խառնուկների առկայությունը: Փաթեթավորումը՝ ապակե կամ համակցված պոլիմերային ստվարաթղթե սպառողական տարաներով: Քաշը՝ 1 լիտր:ԳՕՍՏ 32104-2013 կամ համարժեք Անվտանգությունը, փաթեթավորումը, մակնշումը և նույնականացումը՝ համաձայն Մաքսա-յին միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 882 որոշմամբ հաստատված «Մրգերից և բանջարեղեններից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ N 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով: Մատակարարումը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | կատարվում է մատակարարի միջոցների հաշվին` համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով, *ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: *Նշված որոշմամբ սահմանված սննդատեսակների համար: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: " |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Միսիանի Հաց ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | |